ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/28» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 18.06.2019թ.
Ժամը 10:05

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲ վարչության պետի տեղակալ Ա. Մուրադյանը,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ԶԲՖԿԾ պետ Ա. Պապյանը,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ Մ.Ամիրյանը:
Բացակայում է ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ԶԲՖՇ առաջատար մասնագետ Ռ.Զաթոյանը,

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ.Ամիրյան)

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված համապատասխան տեղեկատվության քննարկման և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

1 1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված համապատասխան տեղեկատվության քննարկման և ընտրված մասնակցին հայտարարելու մասին

(Մ.Ամիրյան)

1.1 Քանի որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 06.06.2019թ.-ին տրամադրած՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցման մասին տեղեկատվության համաձայն 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ չեն ունեցել, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակիցների ներկայացրած հայտարարությունները համարել իրականությանը համապատասխանող: Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով չի քննարկվել (գնահատվել):

1.2 31.05.2019թ-ին գնումների համակարգող Մ.Ամիրյանը Armeps.am համակարգի միջոցով ծանուցեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին հրավերով սահմանված ժամկետում և կարգով /3 աշխատանքային օրվա ընթացքում/ ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը՝ m.amiryan@mil.am էլեկտրոնային հասցեին: Սահմանված ժամկետում բոլոր ծանուցված մասնակիցները ուղարկել են վերը նշված փաստաթղթերը՝ բացառությամբ «ՄԷՄԱ և «Իզոռուֆ» ՍՊԸ-ների:

Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պայմաններին, բացառությամբ.

«Ալաադա Ծատուրյան» Ա/Ձ-ի կողմից հրավերի Հավելված 6.1-ով ներկայացված ապրանքների անվանումները չեն համապատասխանում հրավերով սահմանված չափաբաժինների ապրանքների անվանումներին, ինչպես նաև 28-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված դռան բռնակի գույնը չի համապատասխանում հրավերով պահանջվող գույնին, իսկ 34 չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված զուգարանակոնքի կափարիչի չափերը չի համապատասխանում հրավերով պահանջվող չափերին:

«Էֆֆեկտ Գրուպ» ՓԲԸ-ի կողմից հրավերի Հավելված 6.1-ով ներկայացված ապրանքի անվանումը չի համապատասխանում հրավերով սահմանված չափաբաժնի ապրանքի անվանմանը, ինչպես նաև տեխնիկական բնութագրում հրավերով նշվել է «... վերանորոգման նպատակով օգտագործվում է պատերի քսահարդարման համար, գիպսե հիմքով», սակայն մասնակցի կողմից նմանատիպ տեղեկություն նշված չէ:

13.06.2019թ. Հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրեց նիստը և հանձնաժողովի քարտուղարը մասնակիցներին ծանուցեց մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Մասնակիցները սահմանված ժամկետում ներկայացրեցին ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերի շտկված տարբերակները, որոնք հանձնաժողովի անդամների կողմից քննարկվելուց հետո գնահատվեցին հրավերի պայմաններին համապատասխանող:

18.06.2019թ. Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը, որոշեց 42-րդ /«Իզոռուֆ» ՍՊԸ/, 38-րդ և 39-րդ /«ՄԷՄԱ» ՍՊԸ/ չափաբաժինների մասով «Իզոռուֆ» ՍՊԸ-ի և «ՄԷՄԱ» ՍՊԸ-ի հայտերը մերժել և գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով վերջիններիս տվյալները ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն:

Միաժամանակ հանձնաժողովը որոշեց 38-րդ և 39-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից հայտարարել «Հայկ Մարտիրոսյան» Ա/Ձ-ին, իսկ 42-րդ չափաբաժնի մասով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հաջորդաբար 2-րդ և 3-րդ տեղեր զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված գները գերազանցում են նշված չափաբաժնով նախատեսված ֆինանսական միջոցները, ուստի 18.06.2019թ.-ին ծանուցել «Սևադա Ծատուրյան» ԱՁ-ին և «Հիդրո Գրուպ» ՍՊԸ-ին 21.06.2019թ.-ին ժամը 14:30-ին գների նվազեցման նպատակով ներկայանալ միաժամանակյա բանակցությունների:

Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցների որակավորման չափորոշիչները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին, վերջիններիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակիցներ՝ համաձայն ստորև ներկայացվող աղուսյակի:

Չ/հ	1-ին տեղ զբաղեցնող կազմակերպություն
20, 46	«ԲԱՐՍԻՍ» ՍՊԸ
32, 36, 49	«Բեսթ Գրուպ» ՍՊԸ
1, 6, 7, 8, 19, 33, 40	«Էքսպրես Շին» ՍՊԸ
22	«Էֆֆեկտ Գրուպ» ՓԲԸ
5, 9, 11, 16, 21, 26, 37	«Հիդրո Գրուպ» ՍՊԸ
45	«Նաիրի Թորոսյան» Ա/Ձ
15	«Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ
17, 28, 29, 30, 34, 35, 41, 44, 48, 50	«Սևադա Ծատուրյան» ԱՁ
2, 3	«ՍՅ.ՌՈՒ.ՄԱ» ՍՊԸ
31	«Վոլոդյա Նիկողոսյան» Ա/Ձ
14, 27	«ՕԲՈՐՈՆ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ
4, 10, 12, 24, 43, 47	«Օստինատո» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Մ.Ամիրյան)

2.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստը հրավիրել 38-րդ, 39-րդ և 42-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչված մասնակիցների կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերի գնահատման վերջնաժամկետի օրը՝ ժամը 15:30-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) _____ Ա. Մուրադյան

Գնահատող _____ Ա. Պապյան

Գնումները համակարգող _____ Մ.Ամիրյան